

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ
ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ**

30 օգոստոսի, 2022 թ.

N 21- L

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 70-L ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասը, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասը և «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 14.16.23 կետը, ինչպես նաև նպատակ ունենալով ապահովել Պալատի կանոնադրության 5.1.5 և 14.16.24 կետերով նախատեսված պահանջները՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Պալատի խորհրդի 2021 թվականի դեկտեմբերի 2-ի N 70-L որոշմամբ հաստատված «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության «Աուդիտոր և փորձագետ հաշվապահ անդամների շարունակական մասնագիտական զարգացման կարգի» Հավելված 1-ի ՇՄԶ միջոցառումներին մասնակցության ժամերի հաշվարկման կարգի աղյուսակի 1-ին տողի՝

ա) «ՇՄԶ միջոցառում» սյունից հանել հետևյալ արտահայտությունը «, բացառությամբ Պալատի որակավորման քննությունների ծրագրի առարկաների դասընթացների»,

բ) «ՇՄԶ միջոցառմանը մասնակցության համար հաշվարկվող ժամեր» սյունակում «չափով» բառից հետո ավելացնել հետևյալ արտահայտությունը. «, ընդ որում Պալատի որակավորման քննությունների ծրագրի առարկաների դասընթացների դեպքում, յուրաքանչյուր առարկայի գծով ոչ ավելի, քան տարեկան 25 ժամ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի հետ համաձայնեցվելուց և Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո և կիրառվում է 2022 թվականի հունվարի 1-ին սկսվող և դրանից հետո ընկած ժամանակահատվածների համար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ